67-ՐԴ ՆԻՍՏ

7 փետրվարի 1919Թ.

Բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ Զուբյանի. մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, արտաքին գործոց և լուսավորության մինիստրները:

Բժ. Տեր-Հակոբյան - Զեկուցում է ֆելդշերական կուրսեր հիմնելու օրինագծի մասին:

Օրինագիծը Գ ընթերցումով՝ չնչին հավելումներով ընդունվում է և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Աղաբաբեկով - Զեկուցում է Սուրմալվի գավառը և Ղամարլվի շրջանը պառլամենտական կոմիսիա ուղարկելու մուսուլմանական ֆրակցիայի առաջարկության մասին:

Այդ վայրերում տիրում է կատարյալ անիշխանություն, որից մեծապես տուժում է թուրք ազգաբնակությունը: Ավելի շատ նեղում են այդ ազգաբնակության ադմինիստրացիայի ներկայացուցիչները իրենց ապօրինի գործողություններով: Ուստի, մեր ֆրակցիան առաջարկում է մեծ լիազորություններով օժտված պառլամենտական մի հանձնաժողով ուղարկել այդ տեղերը՝ կամայականություններին վերջ տալու համար:

Բժ. Տեր-Հակոբյան - Մեր ֆրակցիան համաձայն է առաջարկության, միայն թե առաջարկում ենք հանձնաժողովին տալ արտակարգ լիազորություններ:

Ս. Վրացյան - Անկանոնություններ, ապօրինություններ լինում են առհասարակ մեր գավառներում և ոչ միայն թուրքերի վերաբերմամբ, այլև զուտ հայաբնակ տեղերում: Համաձայն ենք հանձնաժողով ուղարկելու. թող գնա, քննի, հսկի և կոնկրետ դեպքերի վերաբերմամբ կարգադրություններ անի: Շատ ուրախ ենք, որ մուսուլմանական ֆրակցիան է նման առաջարկներ անում. Ցանկալի է, որ նույն այդ ֆրակցիայի անդամներն իրենց հեղինակությամբ ազդեն իրենց ցեղակիցների վրա՝ օգնության գալու իրենց հայ հարևանին, որ սովից մեռնում է: Այդ ձևով միայն հնարավոր կլինի բարեկամություն ստեղծել հայ և թուրք ժողովրդի և վերջինիս ու ադմինիստրացիայի միջև: Մենք համաձայն ենք հանձնաժողով ուղարկելուն, միայն թե առաջարկում ենք չսահմանափակել նրա գործունեությունը հայ-թուրքական շփումներով:

Եր. Հարությունյան - Համաձայն ենք արտակարգ լիազորություններով հանձնաժողով ուղարկելուն:

Այնուհետև խոսում են՝ բժ. *Տեր-Հակոբյան, Մուշեղյան, Մինախորյան և Ե. Սարգսյան:*

Քվեարկությամբ միաձայն ընդունվում է հանձնաժողով ուղարկելու առաջարկը:

Քննության է դրվում մե՞կ, թե՞ ավելի թվով հանձնաժողովներ ուղարկելու խնդիրը:

Ս. Վրացյան - Եթե շատ հանձնաժողովներ ուղարկենք, այն դեպքում խորհրդարանի նիստերը տեղի չեն ունենա քվորում չլինելու պատճառով, ուստի և առաջարկում ենք ընտրել մեկը, որ ամենից առաջ կգնա ամենակարիքավոր գավառը՝ Սուրմալու, որտեղ աշխատանքները վերջացնելուց հետո կանցնի Ղամարլվի և այլ շրջանները:

Եր. Հարությունյան - Մեր ֆրակցիան համաձայն է այդ առաջարկության:

Առաջարկը քվեարկվում և 25 ձայնով ընդունվում է:

Հանձնաժողովի լիազորությունների վերաբերմամբ բանաձևերի քվեարկությունը թողնվում է ընդմիջումից հետո:

15 րոպե ընդմիջում:

Պառլամենտական հանձնաժողովի գավառ գնացող արտակարգ լիազորությունների վերաբերմամբ բանաձևեր են առաջարկում ժող[ովրդական] կուսակցության և էսէռական ֆրակցիաները. ձայների մեծամասնությամբ ընդունվում է էսէռականը:

Նախագահ - Առաջարկում է կատարել հանձնաժողովի ընտրությունը:

Ս. Վրացյան - Հարմար ենք համարում, որ յուրաքանչյուր ֆրակցիան տա մեկ անդամ:

Այդ առաջարկությունն ընդունվում է խորհրդարանի կողմից:

Որոշվում է հանձնաժողովի անդամներին օրապահիկ տալ 50 ռուբլի:

Ս. Վրացյան - Զեկուցում է խնամատարության մինիստրությունը խնամատարության և աշխատանքի մինիստրության վերածելու օրինագծի մասին;

Այդ առթիվ թեր ու դեմ խոսում են՝ *Եր. Հարությունյան, Մինախորյան, Ազատյան, Բուդաղյան, Աղբալյան, Հ. Ստեփանյան և Մուշեղյան:*

Հետաձգվում է՝ օրինագծի քննությունը աշխատանքի հանձնաժողովի քննությանը հանձնելու համար:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է համաճարակից հիվանդանալու կամ մահանալու դեպքում պետական ծառայողներին ու նրանց ընտանիքին նպաստ տալու օրինագծի մասին:

Որոշվում է օրինագիծը վերադարձնել կառավարությանը՝ լրացնելու համար:

Հ. Բուդաղյան - Զեկուցում է զինվորական դատարանով դատապարտված Երեմ Սիմեոնյանի պատիժը մեղմացնելու խնդրի մասին:

Խորհրդարանը ներումն է շնորհում հիշյալ Սիմեոնյանին:

Ն. Աղբալյան - Խմբագրական հանձնաժողովի կողմից կարդում է նախորդ նիստերում ընդունված օրինագիծը՝ 1. քաղաքային միության ծառայողների լիկվիդացիայի, 2. բամբակի մոնոպոլիայի օրենքը լրացնելու և 3. երկրագործական և պետական գույքերի վարչության վերաբերմամբ:

Խորհրդարանը հաստատեց այդ օրինագծերը:

Տ. Ռաշմաճյան - Դպրոցական հանձնաժողովի կողմից զեկուցում է ուսուցիչների միության վարչության դիմումի մասին՝ 1919թ. հունվարի 7-ին որոշած նպաստը տարածելու և հայկական դպրոցներում ծառայողների վրա և անորմալության վերջ տալու նպատակով հայկական դպրոցները դարձնել պետական:

Խորհրդարանը որոշեց հանձնարարել օրենսդրական և դպրոցական հանձնաժողովներին համապատասխան մի օրինագիծ մշակել:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 19 փետրվարի 1919թ.